դամբարանի վերայ, օրհնեց ժողովրդին և գնաց տեղւոյն դպրոցը, որ յարդարուած էր Նորին Վեհափառութեան համար։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Օշականի հասարակութեան պատրաստած ճաշը։ Նորին Օծութիւնը գոհ եղաւ տեսնելով Նորաշէն վայելուչ եկեղեցին, ժողովրդի ջերմեռանդութիւն և նոր պատրաստած ճանապարհը, որով կամրջից դիւրութեամբ կարելի էր բարձրանալ Խրամը։ Ժամը 4ին ճաշից յետոյ օրհնելով ժողովրդին ուղևորեց դէպի Էջմիածին, ուր և ժամանեց երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ժամը 6ին։ Մայր Աթոռոյս Միաբանութիւնը և ճեմարանի աշակերտք իրանց ուսուցիչներով դիմաւորեցին Նորին Վեհափառութեանը վանքի պարսպից դուրս հրապարակի վերայ. և Նորին Վեհափառութիւնը նախընթացութեամբ միաբանական ուխտի շրջապատուած խուռըն բազմութեամբ մտաւ եկեղեցի, աղօթեց Ս. Էջման տեղի առաջ, օրհնեց ժողովրդեան և գնաց Վեհարան։

Հետևեալ առաւօտը, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ ի ձայն յանկացեալ զանգակաց Մայր Աթոռոյս Միաբանական Ուխտը, ճեմարանականք և Վաղարշապատի առաջաւորք խըմբուեցին և կարգ ըստ կարգէ ներկայացան Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթելու։ Վեհափառ Հայրապետը ընդունելով Միաբանական Ուխտին, գոհութիւն յայտնեց որ իւր բացակայութեան ժամանակ ամեն բան կարգին է անցել և ում ինչ գործ յանձնել է՝ սրբութեամբ է կատարուել. Վեհափառ Հայրը յորդորեց բոլորին ըստ կարգի և աստիճանի և ըստ կարողութեան ծառայել ազգին և եկեղեցուն, նպատակ դնելով եկեղեցու պայծառութիւնը և ազգի օգուտը և ջանալով պարտաւճար լինել Աստուծոյ, իշխանութեան և ազգի առաջ։

ՏԱՐԵԴԱՐՁ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

Ամսոյս 26ին, Սուրբ Գէորգայ տօնի օրը, լինելով նաև Մայր Աթոռոյս ճեմարանի բացման 13րդ տարեդարձը, հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցուեց. պատարագիչն էր Գեր. Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան։ Սուրբ պատարագից յետոյ պատարագիչ Սրբազան Հայրը ճեմարանի բացման առիթ առնելով՝ խօսեց ուսման և յատկապէս կրօնական ուղղութեամբ

ուման կարեւորութեան, Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսին պատակի, ձեմարանի մեծածախ շինութիւնը ու շարունակութեան գործը յառաջ վարելու, և Վեհափառ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսի անդուլ և անխոնջ ջանքի համար ձեմարանը ըստ ամենայնի բարգաւաճ դրութեան մէջ պահպանելու համար։

Այս առենաբանութիւնից յետոյ Միաբանական Ուխտը եկեղեցական թափորով և պատարագիչ Սրբազան Հայրը զգեստաւորեալ, ձեմարանի աշակերտները իրանց ուսուցիչներով և Ալէքսանդրապօլից, Ղարսից, Ախալցխայից, Ախալքալաքից և այլ հեռաւոր և մօտաւոր տեղերից Մոզնւոյ Ս. Գէորգայ տունով եկած ուխտաւորները դուրս գալով տաճարից խմբուեցին ձեմարանի հիմնադիր հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Հայրապետի գերեզմանի շուրջը ուր և կատարուեց հանգստեան պաշտօն։

Ճաշին սեղանատանը խօսեց Սինօդի աւագ անդամ Գերապատիւ Տ. Թադէոս Սրբազան Արքեպիսկոպոս և աւուր պատշաճին համեմատ բարեմաղթութիւններ արեց ազգի և եկեղեցւոյ յարատև հաստատութեան, հանգուցեալ Հայրապետի հոգւոյ փրկութեան և ներկայիս՝ առողջութեան և բարօրութեան, ձեմարանի յարատև հաստատութեան և բարեկարգ բարգաւաճման, ուսուցչական խմբի և աշակերտելոց յաջողութեան համար։ Մէջ ընդ մէջ ձեմարանի աշակերտք երգուէին, որով թէ սեղանը պատշաճաւոր շուք էր ստանում և թէ ուխտաւորները լսելով երգեցողութիւնը զգածվում ու զուարճանում էին հոգեւորապէս։ Երեկոյեանը ձեմարանի ճակատը լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով և դրուագներով։